ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն ——————————դասվար——————————————

Թեմա—— Արտահայտիչ ընթերցանությունը գեղարվեստական խոսքի արվեստ է ———

Կատարող —Շահվերդյան Հասմիկ Մարտունի————

Ղեկավար——— ՄԳԴ պրոֆեսոր Ջուլիետա Գյուլամիրյան——————————
————

ԵՐԵՎԱՆ 2002

Ներածություն

Հատազոտական գործունեությունը, որպես մանկավարժական գործունեության կառուցվածքի բաղադրիչ, ազդում է ուսուցչի մասնագիտական իրավասության զարգացման, ուսուցչի անհատականության ձևավորման և զարգացման վրա:Այն սեփական գործունեությունը ինքնաիրացման և ինքնաիրականացման գործընթաց է: Թեման արդիական է, որովհետև արտահայտիչ ընթերցանությունը բանավոր խոսքի արվեստ է և հենց դրանով է պայմանավորված նրա կապը ճարտասանությամ կամ հռետորական արվեստի հետ:

Խոսքը լեզվի դրսևորում է, որի միջոցով մարդիկ հաղորդակցվում են, մտքեր փոխանակում, արտահայտում իրենց զգացմունքներն ու վերաբերմունքը: Խոսքը մտքի արտահայտություն է: Խոսքի ուժով ընթերցողը, ասմունքողը, դերասանը և մանկավարժը կոչված են ներգործելու ունկնդրի մտածողության, կամքի, զգացմունքների վրա:

Կենդանի խոսքը սոսկ հաղորդակցման երևույթ չէ, այն երեք գործողություն է իրականացնում՝ տեղեկատվական, բարոյահոգեբանական և արտահայտչական:Խոսքը ոչ միայն հնչյունների արտաբերում է, այլ արտաբերման ինչու, ինչպես և ինչպիսին լինելն է:Խոսքի բովանդակությունը պայմանավորված է ոչ միայն նրանով, թե ինչ է ասում, այլ՝ ինչպես է ասում :

Ուսումնասիրելով արտահայտիչ ընթերցանության զարգացման ուղին՝ նկատում ենք, որ գրեթե բոլոր ժամանակներում այն ունեցել է իր կարևոր տեղը դպրոցի կրթական համակարգում: Թեև արտահայտիչ ընթերցանության մեթոդիկան հանրակրթական դպրոցում առանձին առարկա չէ, այնուամենայնիվ զարգացման որոշակի փուլերում կարևորվել է նրա դերը երեխայի խոսքի զարգացման, բարոյական ու գեղագիտական, ընթերցասիրության դաստիարակության հարցում:Արտահայտիչ ընթերցանությունը հետաքրքրություն է ստեղծուն գրական ստեղծագործության նկատմամբ՝ մայրենիի ուսուցման բարդ դասգործընթացը դարձնելով առավել աշխույժ ու հետաքրքիր: Նյութի առաջին անգամ ընթերցանությունը աշակերտի համար ուսանելի նմուշ-օրինակ կդառնա, եթե այն նախապատրաստվի :Ուսուցման հիմնական նպատակներից մեկն այն է, որ աշակերտն առավելագույն չափով յուրացնի տեքստը՝ հասկանալով նրա բովանդակությունը, տեքստի ամեն մի հատված:Այդ նպատակին հաջողությամբ ծառայում է արտահայտիչ կարդալը:

Հետազոտական աշխատանքի

Նպատակը - 1. Արտահայտիչ ընթերցանությունը տարրական դպրոցում դարձնել ուսումնական գործընթացի կարևորագույն մաս:

2. Նպաստել աշակերտների կարողությունները բացահայտելուն և մշակել արտահայտիչ խոսք:

3. Արժևորել հայոց լեզվի արտահայտչականությունը և ճիշտ հաղորդակվելու անհրաժեշտությունը:

Խնդիրներ

- 1. Ուսումնասիրել <<Արտահայտիչ ընթերցանությունը խոսքի արվեստ է>> թեմայի վերաբերյալ առկա մասնագիտական գրականությունը:

2. Բացահայտել արտահայտիչ ընթերցանության դրվածքը տարրական դպրոցում:

3. Հետազոտական արդյունքների հիման վրա ներկայացնել մեթոդական ցուցումներ:

Կիրառվող մեթոդներ

1.Ուսումնասիրել եմ մասնագիտական գրականություն և վերլուծել:

2. Օգտագործել եմ հարցաթերթիկներ, քարտեր, փափուկ խաղալիքներ, ձայնարկիչ, գրքեր և արդյունքները վերլուծել:

3. Կիրառել եմ փոխներգործուն մեթոդներ:

4. Կատարել եմ դասալսումներ և քննարկել :

5. Կազմակերպել եմ թատերական ներկայացում:

Հետազոտության նորույթը

1.Ներկայացրել եմ արտահայտիչ ընթերցանությունը մշակող արդյունավետ ձևեր,հնարներ.

Վարժանք

Խաղեր

Նշանների համակարգ

Աղյուսակ

Հետազոտության տեսական նշանակությունը

Մշակել և փորձարկել եմ վարժանքների, խաղերի,տարբեր նշանների միջոցով զարգացնել արտահայտիչ ընթերցանությունը տարրական դպրոցում:

Գործնական նշանակությունը

Իմ մշակած վարժանքները, խաղերը կիրառելի են ուսուցիչների և մանկավարժական ԲՈՒՀ-ի ուսանողների կիրառական պրակտիկայի համար:

Ներկայացնում եմ հարցարան

1.Որո՞նք են արտահայտիչ ընթերցանություն մեթոդիկայի գիտական հիմքերն ու խնդիրները:

2.Որո՞նք են արտահայտիչ ընթերցանությանը ներկայացվող պայմանները:

3.Որո՞նք են ուսուցչի ընթերցանությանը ներկայացվող մեթոդական պայմանները:

4.Ի՞նչ դեր ունեն արտադասարանային աշխատանքները արտահայտիչ ընթերցանության ուսուցման գործընթացում:

5.Թվարկե՛ք ինքնուրույն ընթերցանության կազմակերպման ձևերը:

6.Ո՞րն է արտահայտիչ ընթերցանության ուսումնադաստիարակչական նշանակությունը:

7.Բնութագրե՛ք արտահայտիչ ընթերցանության բարոյական և գեղագիտական դերը:

8.Ընթերցման ինչպիսի՞ առանձնահատկություններ ունեն չափածո և արձակ ստեղծագործությունները:Ներկայացրե՛ք տարբերությունները:

Տարրական դպրոցում ի՞նչ թերություններ կան

Տարրական դպրոցում ուսուցիչները ուշադրություն կենտրոնում չեն պահում արտահայտիչ ընթերցանության զարգացման նպատակները և խնդիրները:Այն չի դարձել ամենօրյա աշխատանքային գործառույթ:Թերի է աշակերտների արտահայտիչ ընթերցանությունը,բարեկիրթ խոսքը և վերաբերմունքը հայոց լեզվի նկատմամբ:Դասալսումները ցույց տվեցին,որ տարրական դպրոցում պետք է մեծ ուշադրություն դարձնել արտահայտիչ ընթերցանության զարգացման վրա և օգտագործել բոլոր հնարավոր մեթոդները և հնարները:Պետք է խթանել աշակերտների հետաքրքրությունը ճիշտ հաղորդակցվելուն և մայրենին արժևորելուն:Այս գործընթացը պետք է սկսել առաջին դասարանից և շարունակել մյուս դասարաններում:

Գլուխ 1

Աշխատիր,որ խոսքդ լինի համակ լույս և ճշմարտություն –կայծակ, որը զարկելուց առաջ լուսավորում է առարկաները: Գարեգին Նժդեհ

Գրականությանը տաղանդավոր ընթերցողներ անհրաժեշտ են նույնքան, որքան տաղանդավոր գրողներ:

Ս.Մարշակ

Լավ կարդալը եղանակ ունի, նա մի տեսակ գնացական երգ է: Յուրաքանչյուր տառ, շեշտ և կետ զանգակի պես հնչում է երեխայի ականջին:Հոգեբոխ երգի նման թափանցում է մարդկային հոգու խորքերը,թրթռացնում բոլոր նուրբ լարերը նրա մոտ:

Ղազարոս Աղայան

Լեզուն, անշուշտ,ամենաազնիվ գործիքն է,որի միջոցով մի մարդ իր ներքին հոգեվիճակն է արտահայտում այլ մարդկանց: Խ.Աբովյան

Գլուխ 2

Հետազոտական աշխատանքը կառուցված է խոսքի տեխնիկայի ընդունված բաղադրիչներով. շնչառություն, ուղղախոսություն, առոգանություն և ձայն: Քայլ առ քայլ կդիտարկվեն բոլոր բաղադրիչները և արդյունքները կներկայացվեն մինչ փորձարկումը, ապա փորձարկումից հետո ձեռքբերումների արդյունքները:

Հետաքրքրություն առաջացնող աշխատանքներ

Ձայնարկիչով լսում են Հ.Թումանյանի հեքիաթների ընթերցումը Սուրեն Քոչարյանի կատարմամբ: Քննարկում տպավորությունները:

Աշխատանքներ ճիշտ շնչառության շուրջ

Դիտարկում- ընթերցել Հ.Թումանյանի <<Աշուն>> բանաստեղծության 4 տողը մեկ շնչով: Դիտարկման արդյունքը ցույց տվեց,որ շունչը չի բավականացնում:

1.Կարդալուց առաջ խորը շունչ քաշել, շունչը պահել և սկսել:

2.Մի մտքից արագորեն չանցնել հաջորդ մտքին, դադար առնել,շնչել:

3. Կարդալիս կանգնել կամ ուղիղ նստել,որպեսզի շնչելը ավելի հեշտ լինի:

Հրահանգնելը լսելուց հետո նույն աշխատանքը ճիշտ կատարեցին:

Աշխատանքներ ուղղախոսական նորմերի շուրջ

Ընթերցանություն ձևավորումը անհրաժեշտ է սկսել ուղղախոսական պարզագույն կանոնները յուրացնելուց հետո:Խոսքը ներշնչող չի լինի, եթե հաղորդվող բառերը չարտասանվեն ճիշտ և անաղարտ:

Ուղղախոսական նորմերը հնարավորություն են տալիս հաղթահարել գրության և արտասանության անհամապատասխանությունները (մարդ-մարթ):Ուղղախոսական նորմը լայն ընդգրկումով լեզվի տվյալ ժամանակահատվածում կանոնավոր համարվող արտասանությունն է:Անհրաժեշտ է նկատի ունենալ,որ ուղղախոսությունը հիմնականում պայմանավորված է հնչյունային համակարգի յուրահատկություններով: Ըստ այդմ լեզվում համապատասխանաբար առանձնացվում են արտասանական հետևյալ անճշտությունները. ձայնավորների,բաղաձայնների, երկհնչյունների արտասանական խախտումներ, հնչյունի աղավաղում:

Ձայնավորների ուղղախոսություն

Բառաբարդման հետևանքովբառամիջում գտնվող ե-ն արտասանվում է յե, իսկ ո-ն ՝ վո, երբ հաջորդում է ձայնավորով վերջացող բառի կամ բառարմատի:

Փորձարկում

Կարդալ հետևյալ բառերը նախ մինչ բացատրելը, ապա բացատրելուց հետո:

Առաջ	Արդյունք	Հետո	Արդյունք
Կիսաեփ	-	Կիսաեփ	+
Ամենաերջանիկ	+	Ամենաերջանիկ	+
Հնաոճ	+	Հնաոճ	+
Անորոշ	-	Անորոշ	+
Քսաներկու	-	Քսաներկու	+
Մեներգ	-	Մեներգ	+
Գետեզր	-	Գետեզր	+
Տասներեք	-	Տասներեք	+
Ամենաորակյալ	+	Ամենաորակյալ	+
Ինքնաեռ	+	Ինքնաեռ	+
Անձրևորդ	-	Անձրևորդ	+



Հնչյունափոխության սխալներ

Համբյուր-համբուրել

Ողջույն-ողջունել

Վիրաբույժ,ատամնաբույժ

Ժարգոնային սխալներ. խի – ինչու,հելնել- բարձրանալ,ուրդի-որտեղ:Կապային կառուցվածքի ոչ ճիշտ կիրառություններ և թվականների ոչ ճիշտ արտասանություն

Ինձ համար	Տաս-տասն
Մեզ պես	Ձերո-զրո
Քեզ նման	Եռեսուն-երեսուն
Ձեզ վրա	հիցուն-հիսուն

Ուղղախոսական վարժանքները կրտսեր դպրոցում ավելի արդյունավետ կլինի,եթե այն խաղային բնույթներ ունենա:Խաղը կարելի է կազմակերպել բոլոր դասարաններում<Ոչ թե՝ այլ>:Խաղի միջոցով աշակերտների ակտիվ բառապաշարի մեջ կմտնեն ուղղախոսական արժեք ներկայացնող բառեր:Իմ հետազոտությունը ցույց տվեց,որ մեկ շաբաթվա ընթացքում աշակերտների բառապաշարը ընդլայնվեց, և խաղի ընթացքում աշակերտները ձեռք բերեցին գիտելիքներ, բարձրացավ նրանց մոտիվացիան և մեծ թվով բառեր ներմուծեցին իրենց ստեղծած խաղերի մեջ:Նույնիսկ դասամիջոցին խաղում են այդ խաղը:Իրենց նախաձեռնությամբ ստեղծեցին նաև պաստառ և անընդհատ ավելացնում են բառեր,որոնք կամաց մտնում են իրենց ակտիվ բառապաշարի մեջ:

Առոգանությունը արտահայտիչ խոսքի կարևորագույն հատկանիշներից մեկն է: Առոգանությունը ճիշտ արտասանելու, լեզվական միավորների հնչարտասանական, շեշտադրական հնչերանգային հատկությունների նորմերի ամբողջություն է:Դեռ վաղ ժամանակներից տեքստի, գեղարվեստական ստեղծագործությունների ճշգրիտ արտասանությունն ու ընթերցանությունն ապահովել է առոգանության նշանների իմացությունը:Առոգանության նշանները դիտվում են իբրև ընթերցվող նյութի նոտային գրառում:Հնչերանգը նախադասության արտաբերման ընթացքում արտասանական ելևէջների ամբողջություն է:Այն խոսքի արտահայտչական միջոցների հիմքն է,որն իմաստավորում, գունավորում է `արտահայտելով խոսողի վերաբերմունքը:

Գեղարվեստական ընթերցանության մեջ դրսևորվում է հնչերանգի երկու տեսակ՝ հուզական և տրամաբանական:

-Ա՛յ փոքրիկներ,ա՛յ սիրուններ,-

Ասաց քամին տերևներին,-

Աշունն եկավ,մոտ է ձմեռ,

Ի՞նչ եք դողում ծառի ծերին:

Ոսկի ,դեղին, վառ ծիրանի

Գույներ հագե՛ք խայտաբղետ

Ու ճյուղերից ձեր մայրենի

Եկե՛ք ինձ հետ, փախե՛ք ինձ հետ…

Դիտարկումը ցույց տվեց,որ նախապես պատրաստելը, բացատրելը նպաստեցին ճիշտ առոգանությամբ ընթերցելում:Վարժանքներ առոգանության շուրջ.երկար արտասանել այ բառը, դադար առնել ստորակետ հանդիպելիս, ինչ բառը հարցնելով արտասանել, հագեք,եկեք,փախեք բառերը շեշտել և այլն:

Ձայն և ձայներանգ

Ձայնը բնության թանկարժեք պարգևն է մարդուն:Այն անփոխարինելի կամջակ է ընթերցողի և ունկնդրի միջև:Կրտսեր դպրոցում մայրենիի դասընթացի կարևոր բաղադրիչներից է ընթերցանությունը,որի նպատակն է զարգացնել կրտսեր դպրոցականի կարդալու, վերարտադրելու կարողությունը հարստացնել խոսքն ու բառապաշարը, ճանաչողական և լեզվական գիտելիքները, ձևավորել առժեքային համակարգ:Կարդալու տեխնիկայի զարգացմանը զուգընթաց անհրաժեշտ է նաև արտահայտիչ խոսքի և կարդալու կարողությունները մշակել դեռևս գրաճանաչության այբբենական շրջանում:Պետք է ծանոթացնել խոսքի տեխնիկայի բաղադիչները ՝ շնչառություն, ձայն, հնչերանգ,առոգանություն:Հատուկ շնչառական վարժությունների միջոցով սովորեցնել ճիշտ շնչառություն, ձայն, հնչերանգ,առոգանություն:

Այսպես ՝ կարդալ մտքում,արտասանել շշուկով,դանդաղ, ցածրաձայն,բարձրաձայն,արագ:Անհրաժեշտ է երեխայի ուշադրությունը հրավիրել հարցական, բացականչական, հրամայական,պատմողական նախադասությունների ելևէջների վրա:

Շնչառական վարժանքներ

1. Կարդացեք տրված բանաստեղծության հատվածը մեկ շնչով ՝առանց կետադրական նշանների

Ամպն անձրև է թափում առատ

Արտն աճում է ամպից արագ

Արտն աճում է աչքն արևին

Արմատները անձրևներին:

2. Կարդացեք առած –ասացվածքը մեկ շնչով.

Աղվեսն իր պոչն է վկա բերում:

3.Հնարավորինս արագ կարդացեք շուտասելուկը.

Մուկը մատ մատին կտա

Տան կարասը պատին կտա:

4.Կարդացեք համապատասխան կետադրական նշաններով և երկու տողից հետո շունչ քաշեք.

Փոքրի ՛ կ մրջյուն,ժի ՛ ր մրջյուն,

Ի՞նչ ես վազում օրնիբուն,

Կանգ չես առնում մի վայրկյան

Դու օր չունե՞ս հանգստյան:

Ձայնը հոգու վրա ազդելու ամենաուժեղ զենքերից մեկն է, ձայնի հաջող ընտրված բարձրությունը,ուժգնությունը,արագությունը,տեմպը,ռիթմը մեծ նշանակություն ունեն ունկնդրի տրամադրության փոփախության հարցում:

Դիտարկում վարժությունների միջոցով

1.Կարդացեք շուտասելուկը փոփոխական տեմպով.դանդաղ,միջին, հետո արագ:

Իրար մոտիկ երկու ծառ

Երկու ծիտիկ՝ վրան թառ

2. Կարդացեք Հ.Թումանյանի <<Մի բաց նամակ ամենքին>> բանաստեղծությունը ձայնի ուժն ու հնչերանգը յուրաքանչյուր տողում մի քիչ իջեցնելով.

Դաշտն ու անտառ, գյուղի ճամպան

Ծածկվել են մե թիզ ձյունով.

Էլ չի ճարվում ուտելու բան,

Ով է տեսել այս տեսակ սով.

Ոչ մի ցորեն ոչ, մի հատիկ...

3. Կարդացեք Հ.Սահյանի <<Գարուն է գալիս>> բանաստեղծության հատվածը ձայնի ուժն ու հնչեղությունը զարգացնելու համար հաջորդ տողը նախորդից ուժեղ և հնչեղ արտասանելով՝ գագաթնակետին հասցնելով վերջին տողերը.

Ծիլերն են դաշտում կանաչին տալիս,

Դռները բացե՛ք, գարուն է գալիս:

Ձմեռը հալվել, դարձել է առու,

Դարձել է առու, դարձել է վտակ

Արաքսի հունով գնում է հեռու,

Գնում է դեպի ծովը անհատակ:

Դիտարկումը ցույց տվեց,որ վարժանքների միջոցով կարելի է երեխաներին սովորեցնել ճիշտ շնչառությամբ և ճիշտ ընտրված ձայնի երևէջներով արտահայտիչ ընթերցել, ցանկացած բանաստեղծություն կամ տեքստ:



Դիագրամայի վրա պարզ երևում է,որ վարժանքների ընթացքում աճ է գրանցվում,նաև ակտիվություն են դրսևորում:Զարգանում է երեխայի ինքնավստահությունը,

ինքնագնահատումը:Բարձրանում է սովորողի մոտիվացիան, հետագա աշխատանքների ընթացքում սեփական նախաձեռնություններով են ներկայանում և փորձում ինքնուրույն հասկանալ այն խնդիրները,որոնք կարևորվում են տրված աշխատանքում:Սա արդեն արդյունք է,որ զգացվում է և տեսանելի է:

Դադարը բանավոր խոսքի կազմակերպող միջոցներից է

Դադարը ընթերցողին տալիս է շնչառությունը կարգավորելու հնարավորություն:Պետք է շունչ քաշել այն տողում, ուր դադարը հնարավոր է ըստ իմաստի,քանի որ անտեղի դադարը կարող է փոխել կամ խեղաթյուրել նախադասության իմաստը: Գեղարվեստական ընթերցանության առանձնահատկությունները հաշվի առնելով ՝ ընդունում ենք դադարի երեք տեսակ.քերականական, իմաստային կամ տրամաբանական,հոգեբանական կամ գեղարվեստական:Բանաստեղծության մեղեդայնությունը պահպանելու նպատակով ընդունված է տաղաչափային և ռիթմային դադար:Դադարի այս տեսակը բանաստեղծության յուրաքանչյուր տողից հետո պայմանականորեն նշվում է ուղղահայաց գծիկով /:

Քերականական դադարները տրվում են տրոհման նշանների առկայության դեպքում: Ստորակետի և բութի համար ընդունելի է ավելի կարճ դադար-1 վրկ, միջակետի համար ավելի երկար-2 վրկ, վերջակետինը-3վրկ,բազմակետի և կախման կետի համար-4 վրկ:

Առաջադրանք-ընթերցիր բանաստեղծությունը ՝ օգտվելով տրոհման նշանների համապատասխան դադարներից.

Խիտ անտառում մի բրդոտ,

Տրորելով ծիլ ու խոտ,

Որոնում է պտուղ, միրգ,

Բայց գտնում է մի լավ գիրք:

Շուռ է տալիս փնթփնթում...

-Տեսնեմ՝ ինչ է,որ այդպես

Մարդիկ գովում են սրան...

Տրամաբանական դադարի միջոցով հարստանում է խոսքի տրամաբանությունը:Այն կախված է խոսողի նպատակադրումից,որ միտքն է ուզում հասկացնել,ազդեցիկ դարձնել ունկնդրողին:

Այս դադարը պայմանականորեն նշում են երկու գծիկով //

Առաջադրանք- ըստ պայմանական նշանների ընթերցիր տեքստը.

Մի գյուղացի //վար անելիս//մի կարաս ոսկի է գտնում:Կարասի բերանը //բացում է եթ չէ՝ միջից թզուկ է դուրս գալիս //ու ասում.

-Դու //իմ կարասի բերանը բացեցիր՝ մեջը//լույս լցվեց,քունս //թողեց փախավ: Հիմա//մի բան ասեմ քեզ,բերանդ// ջուր չառնես, նստես:Քունս հետ բերելու համար // քեզ հանելուկներ պիտի ասեմ:Թե չգտար՝ իմ քունը//կմտնի քո մեջ, և դու //ամբողջ կյանքում քնած կմնաս:Թե գտար՝ էս կարասով մեկ ոսկին կտամ քեզ:

Հոգեբանական դադարը անհրաժեշտ է այն դեպքում, երբ փոխվում է նկարագրվող տեսարանը:Դադարի այս տեսակով դրսևորվում է հնչող խոսքի հուզական կողմը: Որքան խորն ու հուական է խոսքը, այնքան այն հարուստ է հոգեբանական դադարներով:Հոգեբանական դադարները պայմանականորեն կարելի է նշել երեք գծով ///:Այսպիսի աշխատանք կարելի է անցկացնել Ռազմիկ Դավոյանի <<Նկարչություն>> բանաստեղծութան ուսուցման ժամանակ:

Փորձարկում-1-ին փուլ:

Նախապատրաստական զրույց ստեղծագործության բովանդականության շուրջ ,ընդհանուր դատողություններ,վերնագրի դիտարկում,կերպարների և հեղինակային խոսքի ընթերցման առանձնահատկությունների:Դատողությունները լսելուց հետո անցնել հաջորդ փուլին:

2 -րդ փուլ-բնագրի ամբողջական ընթերցում,նախընտրելի նաև ուսուցչի ընթերցումը:Աշակերտների հետ քննարկել, թե,որ դատողություններն են համապատասխանում բովանդակությանը,վերնագրի քննարկում. նկարչության միջոցով բանաստեղծը իր մանկությունն է նկարագրում: Չկան կերպարներ,հերոսներ, միայն հեղինակային խոսք է:

3-րդ փուլ-Դուրս գրել հենակետային բառերը և բառային աշխատանքի միջոցով պարզել բանաստեղծի տրամաբանությունը,կարևորած բառերը. տուն,ծառ, բույն, դաշտ, կակաչ, սինձ, տաշտ, մայրիկիս, ինձ, աստղեր, թուփ, վարդ:Բառային նկարչությամբ որոշել դրանց ընթերցման առանձնահատկությունները,ընտրել համապատասխան առոգանությունը, դադարները, ձայնը և հնչերանգը:Զրույցի միջոցով աշակերտների ուշադրությունը հրավիրել հենակետային բառերի ճիշտ ընթերցանությանը: Պետք է ընթերցել շեշտված:Բանաստեղծությունը հուզական է, պետք է ընթերցել հուզական դադարներով, յուրաքանչյուր տողից հետո փոխվում է նկարագրվող տեսարանը:Զրույց-քննարկումներից հետո ուսուցիչը աշակերտների ուշադրությունը հրավիրում է արտահայտչական և հուզական ներգործության վրա, քանի որ բանաստեղծությունը հուզական է, պետք է ընթերցել հոգեբանական դադարներով, յուրաքանչյուր տողից հետո փոխվում է նկարագրվող տեսարանը:

Այստեղ/// մի տուն նկարեմ,

Կողքին /// մի ծառ նկարեմ,

Վրան/// մի բույն նկարեմ,

Մեջը/// ծիծառ նկարեմ:

Հեռվում/// շոգ դաշտ նկարեմ,

Կակաչ ու սինձ/// նկարեմ,

Ջրով լի/// տաշտ նկարեմ,

Ու/// մեջը ինձ նկարեմ:

Կողքիս /// մայրիկս կանգնի,

Ես/// ջուր ցանեմ փեշերին

Խոշոր աստղեր կցոլան///

Նրա սրտի գիշերին:

Հետո /// մի թուփ նկարեմ,

Վրան խոշոր, կարմիր վարդ,

Այնքան/// անուշ նկարեմ,

Որ զարմանա/// ամեն մարդ:

Հետազոտությունը ցույց տվեց,որ նախապես մշակված և քննարկումների միջոցով պարզաբանումները հնարավորություն են տալիս աշակերտներին օգտվել պայմանական նշաններից, զգալ հնչերանգը և արտայատիչ ընթերցել բանաստեղծությունը:



Հայտնի է արտահայտիչ ընթերցանության երկու եղանակ . բեմական և դասարանային:Անառարկելի է,որ արտահայտիչ կարդալու նախապայմանը բնագիրը լավ հասկանալն է:Որպեսզի երեխաները լավ ըմբռնեն և տարբերեն նախադասությունների հնչերանգը, ուսուցիչը կարող է դիմել հետևալ հնարին: Կազմակերպել դերային խաղեր,որի ընթացքում երեխաներն ավելի բնական և անկաշկանդ են:Աշակերտների արտահատիչ ընթերցելու կարողության ձևավորմանը նպաստում են ուսուցչի կամ աշակերտների կարդալու եղանակների վերլուծությունները,որը կարելի է կատարել հետևալ հաջորդականությամբ.

1.Կարդալ ստեղծագործությունը՝ ուշադրություն հրավիրելով ստեղծագործությանը վերաբերող յուրաքանչյուր մանրուքի:

2.Որոշել ստեղծագործության ենթատեքստը. ինչ է կամեցել հեղինակը հասկացնել ընթերցողին:

3.Տարբերել արձակի և չափածոյի ընթերցման յուրահատկությունները:

4.Մտքում ընթերցել և առանձնացնել այն գլխավոր հատվածները,որոնք հատկապես հուզել են, հետաքրքիր հուզմունքներ արթնացրել:

5.Կատարել արտասանական վերլուծություն, թե,որ տողը ինչպես պետք է ընթերցել, ձայնի ինչպիսի բարձրությամբ, ինչ շեշտադրումներով:

Ուսուցիչը պետք է սովորողներին զգացնել տա հեղինակի և հերոսների խոսքի հնչերանգային տարբերությունները: Հեղինակի խոսքը կարդում են դանդաղ, հանգիստ տոնով, պատմողական հնչերանգով, իսկ գործող անձերի կամ կերպարների խոսքերը իրենց հատուկ ձայնով: Կրտսեր դպրոցականի ինքնուրույն խոսքի դժվարությունը խոսքային հիշողության չմշակվածությունն է: Հիշում է այն, ինչ հետաքրքիր է:Այս առումով կարևորվում է ուսուցչի խոսքի ունկնդրումը:Երեխաները լսում են ուսուցչի ընթերցանությունն ու արտասանությունը, մտապահման ճանապարհով սովորում են փոքրիկ բանաստեղծություններ,նախադասություններով վերարտադրում են նկար- պատմություններ:Այբբենական շրջանում ուսուցիչը պետք է ուշադրություն դարձնի հնչյուն-տառերի պարզ ու հստակ արտաբերմանը:Հետ այբբենական շրջանում ուշադրություն է դարձնում կարդալու որակական հատկանիշների ձևավորմանը.կարդալ ամբողջական բառերով և նախատեսված արագությամբ <<Կարդալ ինչպես խոսում են>> սկզբումքը պահպանելով, կենդանի խոսքի հնչերանգը և առոգանությունը արտահայտելով:

Առաջին և երկրորդ դասարաններում մշակվում են ճիշտ և գիտակցաբար կարդալու կարողությունները:

Երրորդ դասարանում ավելանում է կարդացածը հասկանալու հնարավորությունները և ձերք են բերում արտահայտիչ կարդալու հմտություն:

Չորրորդ դասարանում կրտսեր դպրոցականն արդեն տիրապետում է ընթերցանության,խոսքի զարգացնամ և հաղորդակցման համապատասխան

կարողությունների և հմտությունների.

1. Սահուն և գրագետ կարդալ և պահպանել հայերեն խոսքի ճիշտ արտասանությունը:

2. Հասկանալ կարդացած տեքստի բառերը:

3.Տարբերել արձակ և չափածո ստեղծագործությունները:

4.Կարդալ գեղարվեստական և գիտահանրամատչելի ոչ բարդ տեքստեր և բանավոր ու գրավոր վերարտադրել դրանց բովանդակությունը:

5.Բանավոր և գրավոր ներկայացնել զգացմունքները, երևակայությամբ պատկերացրածը:

Հաշվի առնելով առարկայական չափորոշիչներով նախատեսված պահանջները՝ այսօր տարրական դպրոցներում նախատեսված են <<Գրական ունկնդրում և խոսք>>,<<Ինքնուրույն ընթերցման նյութեր>> ձեռնարկները,որոք օգնում են դասընթացը առավել հետաքրքիր և բովանդակալից դարձնել:Այս դասաժամերի ընթացքում մշակվում է ընթերցանության տեխնիկան, բարեկիրթ խոսքը: Շատ է նպաստում նաև դերային գործունեությունը:

Հետազոտություն դերային խաղերով

Տարբեր իրավիճակներում աշակերտները պետք է կարողանան ընտրել հեղինակի,կենդանիների ձայները և վերարտադրեն: Այս աշխատանքը նախ կատարվում է առանց նախապես մշակվելու: Հետո աշակերտների միջոցով պարզաբանում են հեղինակի և մյուս հերոսների խոսքը ճիշտ արտաբերելը և փափուկ խաղալիքների միջոցով ներկայացնում են փոքրիկ դրվագրեր:

Հեղինակ-Մի անգամ արջն ու մուկը հանդիպեցին:Արջի տրամադրությունը շատ բարձր էր (պետք է կարդալ պատմողական նախադասության նման)

Արջ- Ես այսօր մեղր եմ կերել, ուրախ եմ ու երջանիկ:Գիտես ինչ համեղ է մեղրը:

Մուկ-Ես էլ մի բուռ ցորեն ճարեցի ու ախորժակով կերա:

Արջի և մկան դերերը պետք է հարմարեցնել, կռահել ինչպես են կարդում:

Ներկայացնում են նաև մի այլ իրավիճակ:

Հեղինակ-Անտառի բացատում լսվում էր առյուծի մռնչոցը:Բոլոր կենդանիները վախից թաքնվել էին ծառերի հետևում:Առյուծը կանգնեց բացատում և գոչեց.

Առյուծ-Ես՝ կենդանիների արքան,հրամայում եմ բոլոր կենդանիներին արագ հավաքվել բացատում:

Նապաստակ-շատ եմ վախենում առյուծից, երևի ինձ կուտի:

Աղվես-ինչ խորամանկության դիմեմ,որ ազտվեմ առյուծից:

Գայլ-Ես կգնամ վերջում,որպեսզի ինձ չնկատի:

Կրիա-տեսնես կհասցնեմ ներկայանալ առյուծ արքային:

Արդյունքը-աշակերտները կարողացան պահպանել արտահայտիչ ընթերցանության բաղադրիչները.ձայն,հնչերանգ,դադարներ,առոգանություն:

Ուրեմն՝ տարրական դպրոցում դերային խաղերի միջոցով կարելի է մշակել արտահայտիչ ընթերցանություն և բարձրացնել աշակերտների վերաբերմունքը,հետաքրքրությունը դասանյութերի նկատմամբ:

Արտադասարանային միջոցառումները կարևոր խթան են աշակերտների խոսքը մշակելու գործում:Ուսուցիչը ուղղորդում է նրանց՝ իմանալով նրանց կարողությունները:Պետք չի ոչինչ պարտադրել, ցանկացած արտադասարանական միջոցառում պետք է քննարկել աշակերտների հետ,ընտրել թեման, անհրաժեշտ նյութերը,որոշել յուրաքանչյուրի անելիքը և նախապես մշակել նրանց խոսքը:

Միջոցառում-Իմ սրտի Թումանյանը

Նախապատրաստական աշխատանքներ. խճանկար մեթոդի օգտագործում:
Դասարանը բաժանել 5 խմբի:

1-ին խումբ- լրագրողներ՝ կազմակերպում են հարցազրույց մյուս խմբերի աշակերտների հետ:

2-րդ խումբ-տեղեկատուներ՝ հետաքրքիր տեղեկություններ են բերում Թումանյանի կյանքի և գործունեության մասին:

3-րդ խումբ-ասմունքողներ՝ արտասանում են իրենց ընտրած բանաստեղծությունները և պատասխանում են լրագրողների հարցերին:

4-րդ խումբ-հեքիաթասացներ՝կարդում են Թումանյանի հեքիաթներից:

5-րդ խումբ-դերասաններ՝ դերային խաղով ներկայացնում են Թումանյանի հեքիաթներից:

Լրագրողները մոտենում են խմբերին և հարցերի միջոցով պարզաբանումներ անում: Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր ընտրած առաջադրանքները և հիմնավորում իր ընտրությունը:

Աշակերտները անկաշկանդ են,ոգևորված,պահպանում են արտահայտիչ ընթերցանության բաղադրիչները:Վերջում լրագրողները

մոտենում են ուսուցչին և խնդրում արտասանել Թումանանյանի ստեղծագործություններից:

Վերջնարդյունքը բարձր է,որովհետև միջոցառման կենտրոնում աշակերտն է,և նրանք իրենց արժևորված են զգում:Այս աշխատանքի ընթացքում զարգացավ աշակերտների համագործակցային կարողությունները,ձեռք բերեցին նոր տեղեկություններ,կարողացան վերլուծել,համադրել,համեմատել,եզրահանգումներ անել,հրապարակայնորեն ներկայացնել պատրաստած նյութերը:

Հետազոտության արդյունք



Եզրակացություն

Հետազոտական աշխատանքի ընթացքում բացահայտեցի, որ <<Արտահայտիչ ընթարցանությունը խոսքի արվեստ է>> թեմային վերաբերող շատ մասնագիտական գրականություն կա: Տարրական դպրոցի ուսուցիչները ունեն մեծ հնարավորություններ ինքնակրթությունը զարգացնելու,որովհետև այն ուսուցչի աշխատանքային գործունեության կարևորագույն տարրն է:Ինքնակրթությունը պետք է դառնա ամենօրյա նպատակ:

Դասալսումների արդյունքները ցույց տվեցին,որ տարրական դպրոցում կան թերություններ: Ուսուցիչները քիչ են կարևորում բարեկիրթ և արտահայտիչ խոսք մշակելու կարողությունները: Կարծում եմ իմ ներկայացրած հնարները, վարժանքները և խաղերը, արտադասարանական միջոցառումները, մրցույթները կխթանեն տարրական դպրոցում արտահայտիչ ընթերցանության, բարեկիրթ խոսք մշակելուն:Այս գործընթացին կնպաստի նաև ուսուցչի բարեկիրթ խոսքը, հոգատար վերաբերմունքը մայրենիի նկատմամբ:

Առաջարկում եմ օրվա պլան-կոնսպեկտ գրելիս անպայման նշեն արտահայտիչ ընթերցանության կարևոր բաղադրիչները, ընթերցանությունը կազմակերպել նախապես մշակած վարժանքներով: Դասարանում փակցնել արտահայտիչ ընթերցանությանը նպաստող կանոնները, ունենալ ուղղախոսության վերաբերյալ պաստառներ և անընդհատ ավելացնել բառեր, արտահայտություններ:

Կրտսեր դպրոցականների համար գեղարվեստական ստեղծագործությունները այն պատուհանն են, որտեղից նրանք տեսնում են աշխարհը, ճանաչում ու սիրում են իրենց շրջապատող բնությունը, մարդկանց, ձևավորվում է ու զարգանում նրանց գեղարվեստական ճաշակը:

Այսպիսով՝ գրականությունն ու գրական ընթերցանությունը այն ակունքն են, որոնց միջոցով ձևավորվում են կրտսեր դպրոցականների հետաքրքրություններն ու սերը ընթերցանության նկատմամբ, հզորացնում է բարոյական արժեքների ներգործության ուժը, գրական խոսքը, խորությամբ հասկանալու կարողությունը: Արտահայտիչ ընթերցանությունը սովորեցնում է տեսնել ու զգալ գեղեցիկը, բարին, վեհը, վսեմը ու ազնիվը:

Օգտագործված ու հանձնարարելի գրականություն

1.Մ.Աբեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն (Մետրիկա),Երևան,1933

2.Ս.Աբրահամյան, ժամանակակից գրական հայերեն,Երևան,1981

3.Է.Աղայան, Լեզվաբանության ներածություն,Երևան,Մակմիլան,2008

4.Ջ.Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա,Երևան,2009

5.Ջ.Գյուլամիրյան, Կարդալու կարողությունների խոսքի զարգացումը տարրական դասարաններում,Երևան,1998

6.Ջ.Գյուլամիրյան, Խոսքի զարգացում,Երևան,2004

7. Ջ.Գյուլամիրյան,Գեղարվեստական խոսքի մատուցման արվեստը.Երևան,1997

8. Տեր-Գրիգորյան, Ընթերցանության մեթոդիկա,Երևան,1978

9. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա,Երևան,1980

10.Ա.Հեքեքյան,Ուղղախոսության դասավանդման մեթոդիկա,Երևան,2010

11.Ֆ.Խլղաթյան, Ոճաբանական բառարան,Երևան,2000

12.Վ.Սարգսյան,Կ.Թորոսյան,Մայրենի 2,Երևան,Ման մար,2016

13.Պ.Պողոսյան,Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ,Երևան,1991

14.Գ.Ջահուկյան հայոց լեզվի ոճաբանություն,Երևան,2007

15.Է.Ջրբաշյան Գրականության տեսություն,Երևան,1980

16.Ս.Քոչարյան, Կենդանի խոսքի որորտներում,Երևան,1963

17.Վ.Միրզոյան, ճարտասանություն,Երևան,2010

18.Ռ.Սահակյան,Արտահայտիչ ընթերցանության դասընթաց (Ուսումնական ձեռնարկ),Երևան,2013